տին և գերի ածէ զՑիսայածին[1] ծաղիկն թագաւորիր թագաւորաց։ Սոյնպէս և այլքն ամենայն՝ որդի ի հաւրէ առեալ արքայութիւն սեփհական, մինչև ի կարմրատիպն և ի դեղձնահերն, ի քաջացն քաջն և ի [թղ. 10ա] յարեաց արին, յանվանելին և յանպարտելին՝ ի տիեզերակալն Տիգրան։ Այն որ թագն էր թագաւորաց և պսակ պըսակաւորաց, հսկա հսկայից, և արքա արքայից. յորմէ սարսէին սաքրէին համատարած տիեզերք. և թագաւորք և իշխանք յերկիր անդեալ մոխրաթաւալ դիմաւք զհող լիզուին. և մարմնաւորք և անմարմինք տըրփէին ի գեղ երեսաց նորա. և իմաստունք ամանակին զարմանային վասն տնաւրէնութեան գերագոյն գոյին, հիմ ոչ եղև յաւուրս սորա։ Որք մոռանան թէ նա ոչ եկն ի խրախութիւն և ոչ առնուլ պաշտաւն կամ փառս, այլ պաշտել և տալ զանձն փրկանս. սակս որո սաստէր Սիմոնի կամողին զկամն նորա։

Եւ զի թէ զբովանդակ գործառնութեան նախնեաց երանելւոյն զյաղթութիւնն և ըզ-

---

1. Ցիսայածին է կոչում Բագրատունիներին հետևելով Մ. Խորենի. թուղթ առ Սահակ Արծրունի, ուր առաջ է բերուած Դաւթի ծննդաբանութիւնը, իսկ Բագրատի մասին ասած է. «Եւ Բագրատունւոյդ ասեմ. երբ բագաւորք ի քեզ ելցեն, եւ բագաւորեք ի Դուին»։